

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՄՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՓԱՓԱՋՅԱՆԻ  
«ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ» ԵՐԿՈՒՄ

Ա. Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դարձվածքները յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողությունն ու հոգեբանությունը խտացված կերպով դրսևորող լեզվական միավորներ են: Դրանք բառային արժեք ունեցող կայուն և ինքնուրույն բառակապակցություններ են, որոնք օժտված են փոխաբերական նշանակությամբ<sup>1</sup>: Այս փոխաբերական նշանակությամբ էլ իմաստավորվում և պատճառաբանվում է դարձվածքների ոճական կարևոր ու անփոխարինելի արժեքը գեղարվեստական խոսքում: Դարձվածքները իրենց էությամբ հակիրճ, սեղմ և միաժամանակ պատկերավոր լեզվական արտահայտություններ են, որոնք գունագեղ ու տրպավորիչ են դարձնում խոսքը: Դարձվածքների ոճական-արտահայտչական նշանակությունը առանձնահատուկ ձևով դրսևորվում է գեղարվեստական գրականության լեզվում:

Արդի հայ գեղարվեստական արձակի լավագույն էջերից է Վահրամ Փափազյանի գրական ժառանգությունը: Նրա «Հետադարձ հայացք» հուշագրությունը գեղարվեստական խոսքի գեղեցիկ, կատարյալ նմուշ է, ուր մեծատաղանդ դերասանը փայլում է դարձվածքների քաջահմուտ գործածությամբ: Վ. Փափազյանը կարողանում է լեզվական նուրբ ղգացողությամբ գործածել յուրաքանչյուր դարձվածք իր ճիշտ տեղում՝ ոճական համապատասխան արժեքով ու երանգավորումով: Երկում գործածված բազմաբնույթ և բազմերանգ դարձվածքները բավական հարուստ նյութ են ընձեռում դարձվածքների լայն ուսումնասիրության համար: Բնորոշ օրինակները շատ-շատ են, սակայն հոգվածը շժանրաբեռնելու համար նշենք դրանցից առավել հատկանշականները, ինչպես՝ ախորժակը կտրել, արյուն-արցունքով լացացնել, գլուխը կորցնել, գործը գլուխ բերել, ծնկները ծեծել, հախից գալ, սիրտը կարդալ, սիրտը թեթևացնել, ոտքը-գլուխը կապել, մահվան դուռը հասնել, փեշերը հավաքել, օձիքին կպչել, աստծո պատիժ, առաստաղ սևացնող, կապովի խենթ, սրտի հատոր, տան տղա և այլն:

«... Ահա ինչու այդ սարսափելի կերպարը աղքատ միջակությունների բերանի պատառն էլ չէ» (Բ, 417)<sup>2</sup>: «... Բայց Շեյնլի վրա տախանում էր սիրտըս հետգհետե...» (Բ, 209): «... Երկար տարիներ ապրեց ինձ հետ... մխիթարելով ինձ և իմ խեղճ սիրտը նույնպես թափառական, ինչպես նա, նույնպես իր հայրենիքն ու հորիզոնները իր մեջ յոթ կողպեֆի հետև կողպած...» (Բ, 154): «Ո՞ւմ խանչալի փառը կընկներ, արդյոք, կամ որի՞» «հեռավոր հաշիվները կխանգարվեին» եթե...» (Բ, 49): «Խեղճերն այդ «աղաների» դռները ավա առնելուց հետո, բացի կեղծ քաղաքավարական խոսքերից, ուրիշ ոչինչ

<sup>1</sup> Տե՛ս Լ. Գ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 287:

<sup>2</sup> Բնագրային օրինակներից հետո փակագծերում ղեղ ենք հատորը (Ա կամ Բ) և էջը:

չէին ստացել» (Ա, 452): «Ներս մտնելիս՝ ձյուններն իջան գլխիս, օրը մթագնեց, գեղեցիկ Շուշին գրող դարձավ աչքերիս, ախորժակս փչացավ...» (Ա, 372): «... Անօրյա մանր հաշիվները վիրավորեցին իմ անշահախնդրութունը, մոռացա սերն ու թավալվեցի մեղքերի ծոցում» (Ա, 157):

Դարձվածքները հատկապես անփոխարինելի են այս կամ այն կերպարը բնութագրելիս.

«...Ապրում էր... ճիվադի նման մի հորաքրոջ խնամքի ներքո, որ ընդունակ էր հասարակ օձից յոթ կաշի հանել» (Ա, 228): Մարդկային շարության, ստորության, նաև՝ ժլատության առավել դիպուկ բնորոշում կարծես հնարավոր չէ պատկերացնել:

Կերպարի բնութագրման հետաքրքիր նմուշ է դերասան Հ. Աբելյանին վերաբերող հետևյալ դարձվածքը.

«Չէր կարող հեռավոր նպատակների համար հաշիվներ անել, որոշ ծրագրերի հաջող ելքի համար սրա կամ նրա մոռումփին խունկ ծխել, ինչպես և չէր կարող իր լայն ոտքերը նեղ կոշիկների մեջ սեղմել» (Ա, 188): Ընդգծված դարձվածքով առավելագույնս շեշտվում է Հ. Աբելյանի ազնվաբարո նկարագիրը:

Ժողովրդական խորիմաստ դարձվածքները հաճախ հանդիպում են նաև կերպարների խոսքում, որոնք բացահայտում են նրանցից յուրաքանչյուրի բնորոշ լեզվամտածողութունը՝ հակիրճութուն, պատկերավորութուն և ազգային երանգավորում հաղորդելով նրանց խոսքին: Բնորոշ է արևմտահայ նշանավոր դերասան Մ. Մնակյանի խոսքը.

«...Արդեն ցարի բարուջները դամբելով, հիմա այնտեղ դումա, վազն ալ ուրիշ գին պիտի ըլլա. ես չեմ տեսնար այլևս..., ես այլուրս մտղեցի, մտղե ալ կախեցի... դուն այսօր մեր կորյունն ես, ամա վաղը մեր առյուծը պիտի ըլլաս, ինչ կրես մեր նե անկե՞նդ օդ ըրե... Իշտե ասիկա վերջին խրատս է, վաղը — մյուս օրը ես կեյլեմ կերթամ, ըսածներս բյուխներուդ ծալրը ոլորե, քի շմոռնաս... առիկա փեք կյուռն կուգա» (Ա, 348):

Ուշադրության արժանի են կերպարների խոսքում հանդիպող որոշ դարձվածքներ, դարձվածային կապակցութուններ, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում, կամ առավելապես բնորոշ են հայոց լեզվի արևմտահայ տարբերակին, կամ էլ պարզապես արևելահայերեն դարձվածքի արևմրտահայերեն տարբերակներն են, ինչպես՝ ինծի նայե, վերջը գեշ կըլլա, բյուխներուգ ծալրը ոլորե, հավկիթեն մեջը մազ կը փնտրեն, փարուջները ձեռքը փախավ, ձեռքերենն չես խալսիր:

«... Անոնց հետը Պետրոսը կրցավ գլուխ էլլալ, զավալը Ալիքսանյանը ոտքով-գլխով կերան. Պինեմեճյանը փարուջները ձեռքը փախաւ...» (Ա, 212): «Էրկան ըրիւ, ծո, վաղը գրասենյակս մտիր՝ հինգ հարյուր լիբանոց չեկ մը տամ՝ դե դուք ալ պտրտվեցեք» (Ա, 310): «Սա էֆենդին վրաս գրե դե՛ Սերգո ըսե, ծո, ինչո՞ւ փերդեն չեք բանար...» (Ա, 308): «... Ազգայնիին ըսե, որ վաղը ժամը իննին փորձ հայտարարե, հատ ունիք նե ուշացեք...» (Ա, 349):

«Հետադարձ հայացք»-ում առանձին խումբ են կազմում բնույթով զրոքային դարձվածքները, որոնք բնորոշ ու տարածված են գրական լեզվում, հիմնականում գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ այրել բոլոր կամուրջները, գիտնականի աշքերով դիտել, մի երկրորդ Ռուբիկոն անցնել, Ալբրտի բանաստեղծ, վարդազույն ակեոցներ: Այս դարձվածքների մի մասը արմատներով կապված է հունական դիցաբանության և մշակույթի հետ, մի քանիսն էլ Աստվածաշնչյան ծագում ունեն: Այդպիսիք են՝ երկրպագել Մեկյոմենային, խնկարկել Բաքոսին, անձնատուր լինել Մորփեոսին, ի վերին Սրուսաղեմ գնալ, յոթերորդ երկնքում լինել, արիստոֆան-

յան դիմակ, սարդանաբալյան խնջույք, Բաքոսի խնկարկուծյուն, հոմերոսյան ծիծաղ, Թորգոմա սերունդ, Ծվայի թոռ, գորդյան հանգույց, Բալթազարյան խնջույք, երիխանյան փող, Սրեմիական ողբասացություն, աքիլլեասյան գարշապար, Մելպոմենայի զոհ, վեստալյան քրմուհի, Արգոսի աչքեր, փրփրածին Վեներա, Նեսոնի պատմուճան և այլն:

Վերոհիշյալ դարձվածքների մեջ յուրահատուկ ոճ և երանգավորում են ստեղծում գրաբարյան դարձվածքները, նաև՝ կայուն գործածություն և դարձվածքի արժեք ստացած մի քանի գրաբարյան կապակցություններ, թևավոր խոսքեր՝ առոք-փառք և երիվարոք, ճշմարտապես և ոչ կարծյոք, հոգի ի բոհն, ձայն բարբառո հանապատի, մետասաներորդ ժամ, նզովից արմատ, անցո բաժակս հինեն, վասն մեղաց ապօրինաց, ի խորոց սրտի, վաղուց անտի, փառաց տաճար, քավ լիցի:

«... Փոխանակ մի անհեթեթ ուշացումով բեմի տախտակամածում մի ցավալի «ավաղ փառացս անցավորի» դառնալու՝ կյուզմիլան գնաց բեմահարթակից, հետը տանելով իր դեռևս շթառամած ծաղիկները» (Բ, 231). «Դիմեցի, ուրեմն, այդ ներքին ձայնին, թե՛ «անցո բաժակս եհենե», զգալով հանդերձ, որ պետք էր խմել այդ բաժակը մինչև մրուրը» (Բ, 154):

Ժողովրդական լայն տարածում ունեցող խորիմաստ դարձվածքների կողքին առանձնակի ուշադրություն են գրավում, այսպես ասած, «փափազյանական» նորահունչ, ինքնատիպ դարձվածքները, որոնք, արդարև, Վ. Փափազյանի լեզվական արվեստի շատ կարևոր արժանիքներից են: Ներկայացնենք դրանցից առավել բնորոշ օրինակներ. արյան մուրհակը վճարել, արվեստի բազկերակը քննել, անտարբեր աչքով նայել, բեղն ու մորուքը արդուկել, լսել աշխարհի շնչառությունը, լավատեսության ծախսեր անել, կնամեծարության ծախսեր անել, կարդալ ճակատագրի գիրքը, խարխսի ճանկել, ժողովուրդը բռնել (հանդիսատեսին գրավել, պահել), հոր տան սեղանից կըշտանալ, պաշտամունքի լապտերը հանգչել, քամվել մեկի ցանցերում, պարտ ու պահանջի նժարը պահել, ուղիղ նժարով կշռել, խնդիրը փակվել, խաղաղ միջին, հիշողության տախտակներ, Վերթերի ժամանակներից մնացած, անփորձ աչք:

Ահա և մեկ-երկու բնագրային օրինակ, որ ավելի ցայտուն է զգացվում դարձվածային նորաբանությունների իրական արժեքը, դրանց համն ու բույրը.

«... Եվ այդ բոլորի մեջ իրեն տեսնում է այնպես, ինչպես էր ինքը, երբ դեռ չէր փանդված կյանքի ճախարակը» (Բ, 334): Մանկությունը բնորոշելու աննախադեպ գեղեցիկ պատկեր է ստեղծվում ընդգծված դարձվածքով:

«Օտյանը, որին տեսել եմ, մարդն ու աշխարհը մի բաժակ օղու հառակում տեսավ, թքեց ու անցավ» (Բ, 311): «... Ես, դառնալով այդ պրիմիտիվ ցեղի թագուհու ամուսինը, փաղափարքությամբ տակ եմ փաշում նրանց...» (Բ, 50): «... Սովորեցի... լսել աշխարհի շնչառությունը և ընտելանալ նրա բազկերակի զարկերին» (Ա, 335): «Իսկ թուրք վերնախավը հեռատես ու հանդարտ ծխում էր իր դայլանը, աչքի տակ պահում բոլորին և սպասում էր իր ժամին» (Ա, 320):

Տեղին է նշել, որ այս դարձվածքներից մի քանիսը իրենց արժանի տեղն են գտել արդի հայերենի դարձվածաբանական բառարաններում<sup>1</sup>:

Դարձվածային նորաբանությունների մեջ առավել հետաքրքրական են ստեղծագործական յուրովի թրծումով կերտված դարձվածքներն ու արտա-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Մ. Սուրիալան, Ա. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

հայտնությունները: Վ. Փափազյանը, ինչպես վայել է ստեղծագործ մտքի տեր արվեստագետին, նյութից ու նպատակադրումից ելնելով՝ «մշակում է» դարձվածքը, ենթարկում համատեքստին՝ պահպանելով խոսքի բանաստեղծականությունը և, իհարկե, ժողովրդայնությունը, որ նույնպես շատ կարևոր է: Այս իմաստով Վ. Փափազյանը մեծագույն վարպետ է և իրապես հարստացրել է մեր մայրենին խոսույն, արտահայտիչ, նորովի հնչող դարձվածքներով, նոր նրբիմաստներով ու արտահայտություններով:

Այսպես, «ատամները սրել» դարձվածքը իր բնագրային համատեքստում փոխվել է «ձերանները սրել»-ու, որն ավելի ընդգրկուն և պատկերավոր է տվյալ դեպքում.

«Ռեակցիան (Պոլսում— Ա. Պ.), սակայն, չէր քնել և մթի մեջ ճիրաններն էր սրում վաղվա հույսերով» (Ա, 240): Նշված դարձվածքը առավել ցայտուն է բնորոշում ոչխարի մորթի հագած գայլերի նմանվող Թուրքիայի առաջնորդներին, որոնք «հարմար առիթի էին սպասում՝ անձնատուր լինելու իրենց մարդակուլ բնազդին»:

«Յուր քսել բերանին» (կաշառել) դարձվածքը յուրօրինակ զարգացում է ստացել՝ վերածվելով, ծնունդ տալով նոր դարձվածքի՝

«Նա... Թեթև ոստումով բարձրացավ իր կառքը, երկու ոսկեդրամով յուզոտելուց հետո մեր տնտես աղբոս ավիր...» (Ա, 63):

Խոսքային ընդհանուր շրջապատի, նյութի թելադրանքով «մշակված» յուրօրինակ նմուշ է վրձնից ընկնել դարձվածքը, որը ֆթից ընկնել— «շատ նման լինել»-ի հետաքրքիր ձևափոխությունն է՝

«... Տիկին էրիկսունը... շատ էր հիշեցնում նիդեռլանդյան Վերածննդի կանացի կերպարներին և կարծես Վան-Պեյլի վրձնից էր ընկել և դեռ չշորացած՝ մոլորվել էր լենինգրադում և այն էլ մեր ժամանակներում» (Բ, 170):

Արժանահիշատակ է նաև հետևյալ օրինակը. «Այն փոքրիկ ծաղկանոցը... սրբավայրերից մեկն է, ուր վիճակվեց ինձ անդառձ կարսախի ու անմխիթար ցավի բաժակը խմել փրփուտից մինչև լեզի մուտք... և շուտահաստվել» (Բ, 451):

Գրական ժագում ունեցող դարձվածքների գործածության մեջ նույնպես Վ. Փափազյանը աչքի է ընկնում իր ընդգծված անհատականությունը և ստեղծագործական մոտեցմամբ: Իբրև խոսքարվեստի մեծ վարպետ և գեղագետ, Արտիստը կարծես չի բավարարվում եղածով, այլ ուրույն ձեռագրով ու գեղարվեստի ինքնօրինակ ընկալումներով եղած իմաստները հարստացնում ու խորացնում է նոր նրբերանգներով, ստեղծում ֆարմ և գունեղ պատկերներ, դիպուկ, խոսուն նկարագրություններ, բնութագրումներ, հասարակ դիպվածը վերածում հետաքրքիր և ախորժալուր պատմության: Ահա մի քանի բնորոշ օրինակներ բնագրից: Համեմատության համար կմատնանշենք նաև այն դարձվածքները, որոնք հիմք են ծառայել նորահունչ, ինքնատիպ դարձվածքների համար.

ա). ոսկի անձրև— «Պարզվեց, որ արժանապատիվ էՖենդին, որի ձեռքերից ոսկի անձրև էր տեղում, համաեվրոպական նշանակություն ունեցող հայտնի խաղամուկներից էր...» (Ա, 312): «Հարյուրավոր լումայափոխներ, տոզած փորերով, իրենց լայնանիստ հետույքի վրա քրտնած ավերով շքեկացնում են այնպիսի մի ոսկու անձրև, որ շես հասկանում, թե ինչու, ինչպե՞ս այդպիսի մտրացկան այդպիսի երկրում» (Բ, 403):

բ) առաջին ջուրթակ— «... Որոնց պիտի մասնակցեին Իսպանիայի լավագույն ցլամարտիկները, ի թիվս որոնց և Ալվարես դ' Ալկալան, քեբակղզու առաջին «Ապագան» (Ա, 311):

գ) խնկարկել Բաֆոսին, Բաֆոսի երկրպագու— «Ներկայացումից հետո

երկուստեք «հաշտութուն» ստորագրվեց ... առաջնորդութեամբ այդ հաշտութեան պատգամավոր և Բաբոսի մշտական Բրամպետ՝ սիրելի Գևորգ Փիրումյանի» (Ա, 37):

դ) Մոսփեոսի գրկում լինել — «Մոսփեոսը դրել էր մատը հոգնած կոպերիս և իմ երկու էութունները պետք է լուծվեին, իրար ձուլվելով՝ մի մարդ դառնային ֆեաքեք դիցուհու մոռացման գրկում...» (Բ, 88): «... Այդ անծանոթ պուրակում, մոտակա ծովի օրորով, Մոսփեոսը երբեք այնքան չի տիրապետել ինձ, ինչպես աշնան այդ կեսօրին» (Բ, 362):

ե) հայր Աբրահամի գիրկը գնալ — «Սամուել Դավիդովիչը Բլյումբերգը... հեռացել էր այս «փուշ աշխարհից, երանություն փնտրելու համար հայր Աբրահամի գրկում...» (Բ, 88):

զ) վերջին շապիկը տալ, ծախել — «Վրույրն ապրեց որպես կատարյալ էպիկուրյան և մեռավ, երբ իր վերջին շապիկը կերավ...» (Ա, 342):

է) մայր մտնել — «Վարանոտ արևը հետզհետե աճելի էր ըմբոստանում կարծես ընդունված օրենքի դեմ և օրեցօր ուշանում էր մտնել իր մոր գիրկը, և թրև գալով երկնակամարում աճելի երկար, քան ընդունված էր մինչ այդ իմ բոլոր տեսած երկինքներում՝ փոքրացնում էր իմ այնքան սիրած մութ գիշերը...» (Բ, 189):

ը) շատ ջուր հոսել — «... Շատ ջուր է հոսել այդ ժամանակներից ի վեր հնամենի «նոր կամուրջի» տակից... Քիչ ջուր չէ հոսել և իմ կամուրջի տակից, և ինչին որպես երազ էին դիտում պատանի աշքերս, այսօր զննում են որպես իրականություն» (Բ, 321):

թ) Երուսաղեմը հեռու շլինել, ի վերին Երուսաղեմ գնալ — «... Ես կանգնել էի այդ սրիկայի դիմաց, ըստ ընդունված կարգի, որով վերականգնելու էի ծերունի վարժապետիս արժանապատվությունը, կամ ենթարկվելու՝ անժամանակ ճամփորդության ի վերին Երուսաղեմ... եթե այդպես վճռոր զենքերի բախտը...» (Ա, 317):

Այսպես Վ. Փափազյանը համեմուտ է իր խոսքը նորիմաստ կամ նորաբույր դարձվածքներով, որոնց շնորհիվ ստեղծվում են գեղեցիկ, նկարեն պատկերներ, կենդանի նկարազրույթյուններ, և խոսքը դառնում է բաղմագույն, ախորժալուր ու տպավորիչ:

Վ. Փափազյանն իր երկում երբեմն գործածում է լատիներեն, հունարեն կամ ֆրանսերեն փոխառյալ դարձվածքներ, թեև լոր խոսքեր և արտահայտություններ, որոնք թեև օտարաբանություններ են, սակայն իրենց ոճական արժեքով հիմնականում արդարացված են յուրաքանչյուրն իր համատեքստում: Այսպես, հեղինակը դրանց կողքին գործածում է նաև հայերեն համարժեք արտահայտությունները՝ աշխուժություն և պեսպիսություն հաղորդելով պատումին:

«Բիրլիական բալթազարյան խնջույքն էր դա, որին վերջ էր դնելու հատուցման անողոք ձեռքը, նոր ժամանակների երիխանյան փողը, որ հնչելու էր մեղավոր քաղաքի պատերի տակ. «Մեկես, ֆագես, դարես», այսինքն՝ դատվեց քո իշխանությունը և շրջեց արդարության լծակը...» (Ա, 406):

«Սակայն ծերանում են ազգերը, ինչպես նաև աշխարհները, երբ լրանում է նրանց համար սահմանված օրերի գումարը և անխուսափելի ժամանակը. «Summa dies ed ineluctabile tempus»<sup>1</sup>:

Որոշ օտարաբանություններ գործածված են առանց հայերեն համարժեքների կամ տողատակի բացատրության, սակայն դրանք այնքան տարածված և, այսպես ասած, «միջազգային» կիրառություն ունեն, որ թվում է, թե բա-

<sup>1</sup> Լրանում է օրերի քանակը, և հասնում է անհետաձգելի ժամանակը (Բ, 395):

ցատրություններն ավելորդ են՝ terra incognita, a la Richelieu, այս մուժիկ: Բացառութիւն են կազմում մեկ-երկու օտար արտահայտութիւններ (sinqua-no, tete poetique), որոնց հայերեն համարժեքները չկան և որոշ դժվարութիւն են ներկայացնում տվյալ օտար լեզուները չիմացող ընթերցողի համար: Սակայն սրանք իրոք բացառութիւններ են և որակ չեն կազմում հուշագրութեան էջերում:

Երկում գործածված դարձվածքները բազմազան են նաև իրենց կազմութեամբ և բաղադրիչների քանակով: Ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ ավելի տարածված են երկանդամ և եռանդամ դարձվածքները: Վերը նշվածները չկրկնելու համար ներկայացնենք նոր օրինակներ՝ աստժո կրակ, կյանքի գիրք, սրտի մուգեռն, շար լեզուներ, աշխարհ մտնել, աչքերով խոսել, աչքերով ուտել, աստղը հանգչել, երես դարձնել, կողերը համրել, համբերութեամբ զինվել, սիրտը թղթատել, բռունցք շարժել փոթորկին, աչքերից կապն ընկնել, գլխարկը թեք դնել, երակներում լավա հոսել, թշվառութեան հատակն ընկնել, կատվին պանիր վստահել, հանգստի ժամը հնչել, մանգաղն ուսին դնել, մեռն ունենալ երեսին, շեյթանի փետուր ունենալ, շնորհների վարագույրը բարձրացնել, շոշափել աշխարհի բազկերակը և այլն: Ավելի քիչ են հանդիպում քառանդամ, ինչպես նաև հինգ և ավելի բաղադրիչ ունեցող դարձվածքներ: Սրանք հիմնականում հազվադեպ գործածվող, «փափազանական» ինքնատիպ ոճին ու լեզվամտածողութեանը յուրահատուկ դարձվածքներ ու դարձվածային արտահայտութիւններ են, ինչպես՝ դատողութեան նըժարում կշռել աշխարհի շարն ու բարին, ժամանակի անիվի հետ քայլել, կանգնել արվեստի ծաղկման արահետներին, կյանքի շարն ու բարին ափի մեջ կշռել, միս ու արյուն դառնալ, հիմնաքար դնել արվեստի տաճարին, նայել կենդանի իրականութեան աչքերին, նոր էջ բացել արվեստի գրքում, շորս հողմերին ցրիվ տալ, սիրամարգից փոխ առնված փետուրներով զարդարել, տարիների վայրէջքը ոտք դնել և այլն:

«Այդպիսով, այդ կերպարի ստեղծագործութեան դափնին միշտ մնաց, ըստ իս, Արմենյանի ձեռնում» (Բ, 16): «Դեզդեմոնա-Իվոն Տրամոն... ինձ հիշեցնում էր Իվոնին, այն Իվոնին, որ տարիներ առաջ կյանքի վարագույրն էր բարձրացրել իմ անփորձ աչեքից...» (Բ, 338): «Եվ ես, որ աշխարհներ էի տեսել մինչև այդ օրը, ափիս մեջ կշռել մարդն ու իր հոգին, ոչինչ չտեսա այնչափ գեղեցիկ, որքան այդ սև օրերին...» (Բ, 450): «... Ոչինչ չտեսա, բացի Համլետի դերակատարից, որը կարծես թե մոզական ձեռքով այդ հեռավորութիւնից վերցրեց սիրտս իր ափի մեջ և տարավ ինձ՝ ուր որ ուզեց...» (Ա, 92): «Երբ տարիների վայրէջքը ռոֆ դրած մի կին շատ բնական ցանկութիւն ունի ամեն մի միջոցով կառչել իրենից հեռացող երիտասարդութեան փեշերին, ներելի է...» (Ա, 96):

Ինչպես տեսնում ենք, երկը բավական հարուստ է դարձվածքներով, այն կարծես դարձվածքների մի անսպառ շտեմարան լինի, որն իր մեջ ամփոփում և խտացնում է հայ ժողովրդական հոգեբանութեան և ազգային մտածելակերպի իմաստնութիւնն ու պատկերավորութիւնը:

Ավարտելով մեր խոսքը Վ. Փափազյանի գործածած դարձվածքների մասին՝ նշենք, որ դրանք արժանի են առավել մանրակրկիտ ուշադրութեան և հանգամանալից ուսումնասիրութեան: